*Աշնանասիրելոյ և պատուելոյ տեառն տեառն*
*Մխիթար աստուածաբանուբեան վարդապետի և Աբբայ Հօր*

*. . . գիտենաս, Վերապատուելի Հայր, թէ արդէն պատրաստ եմ, և այժմ գնամ ի գոյովայ, Վալաքի երկիրն, որ է՝ ի ներքոյ տէրութեանն կայսերին մերոյ վասն միսսիոնարութեան և հոգաբարձութեան Հայոց ազգին, և ետ ինձ կայսրն որքան՝ բաւական է՝ ապրելոյ և զպատիւն իմ առաւել ըստացայ քան զառաջինն, և եմ ի ներքոյ ազնուի և պատուական եպիսկոպոսի միոյ, և յոյժ յոյժ ուրախ եմ։ Ձեր հրամանքն միաբանութեամբ աղօթս արարէք վասն իմ անարժանիս, որ եմ միշտ աղօթող վասն ձեր, զի ոչ գիտենաք թէ ունիմ ի սրտի իմոյ զիւէթ ինչ, այլ եմ և առաւել ես քան զառաջինն, զի ես ճանաչեմ և զտկարութիւնն իմ և զթշնամիս իմ. կամք տեառն օրհնեալ եղիցի . . .։*

*Մնամ պատրաստական տէրութեան ձերում*

*Վիեննայ 23 Ունիսին*
1733

*Խոնարհագոյն Ղուկաս*
*Բարդողիմէոս վարդապետ*
*Միսսիոն. Ասոքելական*

## ԽԸ.

*Գրուած է Հ. Եղիայի թուղթը Պելկրատէն։ Սակայն այդ գրէն որոշ բան մը չի հասկցուիր կատարուած ծիսին հանդիսավայրին նկատմամբ. ինչ որ կ՝երևի՝ Հայոց եկեղեցին է այն։*

*Պատմուած դէպքը Հ. Եղիայի զոյգ նախորդներուն՝ Ստեփանոսի և Բարդողիմէոսի շրջաններէն մնացած սովորութեանց արդիւնք է անշուշտ։ Հոս կը զետեղենք այդ մասը՝ ծիսական սովորութեանց հետաքրքրուողներուն համար։*

*Գերայարգելոյ և Վսեմագունեղի տեառն տեառն*
*Մխիթարայ աստուածաբանուբեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում*

*. . . Դա և յաւուր ուրբաթու խաչեալ ոչ՞ միայն գնեն զխաչելութիւնն, այլ և հանդիսապէս բազմեցուցանեն զս[ր]բազնութիւնն ներ բիւրաւոր մոմեղինացն վառեցելոց. իսկ մեք յայնմիկ գիշերին հուպ արշալուսին սկսաք ներ այնքան խառնիխուռն ժողովրդեանն հանդէպ սրբազնութեան ժամ ասել ըստ հայկականի կերպին, և ի [«]տէր երկնից[»]ին ոմն ի զպրաց սկսաւ մարել զամենայն մոմեղէնսն, իսկ ես յայնժամ արգելեցի զնա ասելով, թէ այն երկուս մոմն որք են հուպ սրբութեան՝ մնասցեն այնպէս վառեալ, և նա սկսաւ ըն[գ]դիմանալ թէ է խաւարումն, և մինչ ետես թէ ոչ եղև այնպէս, ըստ որում ինքն կամէր, իսկոյն ելեալ յեկեղեցւոյն վրդովելով գնաց ի տուն իւր։ Եւս և զսոյնս երբէք տեսեալ և լուեալ իցես, թէ ոք ի զպրաց ճիզմէով կամ ճլերն բաց ոտիւք սպասաւորել պատարագին, և մանաւանդ զսոյնս որ բոկ ոտիւք, այսինքն առանց ճիզմէի և բապճի չապիք հագանիլ և ներ այսքան բազմաց ազանց սպասաւորել ի ձայնաւոր պատարագին։ . . .*

*Ե[ղիա] Վ[արդապետ]*

1733
*յունիսի 27 [Պելկրատ]*